ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

16.12.2022Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
2. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի քննարկում և հաստատում:
3. 2022-23 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում՝ մուտքերի կատարողականով:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Նա ներկայացրեց 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների և դասախոսների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը և պահանջները ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Դեկանը հորդորեց դասախոսներին հնարավորինս օբյեկտիվ լինել, պատճառաբանել նշանակած միավորը, բողոքների և դժգոհությունների դեպքում հետևել համապատասխան ընթացակարգերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Տ. Բազամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներն ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Ժամանակացույցը ներկայացվել է Ուսումնամեթոդական վարչություն և հաստատվել: Կազմվել է օրացուցային գրաֆիկ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ կիսամյակի կտրվածքով ստուգվել է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Զեկուցողը նշեց, որ դասախոսների մոտ նկատելի են ծրագրերի գրեթե ամբողջական

իրականացում /որոշ դեպքերում նկատելի է մուտքի պակաս, որը հիմնականում պայմանավորված է ոչ աշխատանքային օրերով և նախատեսվում է քննաշրջանին զուգահեռ հնարավորինս շտկել բացթողումները/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների մուտքերի կատարման ընթացքը գնահատել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ